

մանկանց վերայ գործածելով՝ կարողապէս յաջողէ՝ նոցա բնական զարգացումն:

(ՇԻՆՆԵՐ)

Թ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶՆԻՒ ՎԱԽՃԱՆ: — ՄԱՀ ԿԱՄ ԿԵԱՆՔ:

Ամենայն որ գործում է կամ խօսում է մի օրինաւոր պատճառով, որ հասարակ խօսքով կոչվում է լատինացի կամ հիմն խօսքի եւ կամ զործոց:

Վարդանանց ազգային տօնը եւ նոցա սիրագործութիւնը խօսքի օրինաւոր սահման կամ հիմն կարող է լինել իւր անմահ յիշատակով: Ուստի սկըսինք:

Ամենայն ազգաց աղբիւրը մի գիտեմք, եւ նորանից բաժանված բոլոր ազգերը: Այս բաժանումն ազգերի բնական է, որովհետեւ ինչպէս ընտանիքի՝ նոյնպէս եւ ազգի մէջ եղած դժամոտութիւնը՝ երկպառակութիւն է կազմում, եւ իւրաքանչիւր կուսակցութիւն մի անհատի խնամոց տակ պարփակուելով՝ աշխատում է իւր կարծեցած իրաւունքը պաշտպանել: հասարակ այս պատճառներով կողմուեցաւ ազգերի ինքնուրոյնութիւնը, եւ այս ճշմարտութիւն է մարդկան իբրեւ մի ազգ դէպ ի Բաբելոն չուելը, եւ այն տեղ եղած դժամոտութիւնը, որոց հետեւանք՝ եղաւ կուսակցութիւն կամ նահապետութիւն, որոց միւր Ազաթանդեղոս հասցնում է եօթանասուն եւ երկուսի: Այս կուսակցութիւնները մէկ զօրութիւն առաջնորդութեամբ՝ զաղծեցան այլ եւ այլ տեղեր: ուր հաստատելով իւրեանց համար բնականութիւն՝ հայրենիք կազմեցին, վախկապեցնելով տեղի դրուծիւնը իւրեանց հմուտեան չափ, որի հետ աշխատեցան ազատեալ բարբառին սեպական յատկութիւններ եւ ո՞ն տալ ուրոյնութեան մտքի ամբողջութիւնը յայտնելու համար՝ լեզու կազմել: Սակայն մարդկութիւնը չբաւականացաւ լեզուով եւ հայրենիքով ազգութիւն կազմել. նա զգաց մի մեծ պակասութիւն, որ կարողանար ինչպէս բնականութեան միութեամբ միացած էր, միանալ նա եւ հոգով եւ

զգացմամբ: Ուստի, որոնք ճանաչեցին ազգութեան վնասութիւնը եւ կամեցան յաւերժացնել՝ կրօնի վերայ մտածեցին, բայց սուղապէս կարճամտութեամբ չկարողանալով իսկապէս հասնել լինել ճշմարիտ Աստուածապաշտութեան՝ նախ բնութեան բնական երեւոյթները՝ գերբնական համարելով՝ աստուածացրին, ապա իւրեանց նահապետներին, կամ հերոսներին նոցա ծնունդ համարելով՝ աստուածութեան ընտանիք կոչեցին. յետոյ աստուածութեան աճող կամ բնական, հայրենիքում գտնուած լեռները, անտառները եւ դաշտերը համարելով՝ նուիրական տեղերը հնարեցին. աւանդութիւնը, որ կրօնի հետեւութիւն էր, կրօնի մասանց համեմատ ծագեցան նոցա մէջ: Հին ժողովուրդը, իւր ճանաչած աստուածներին սկսեց մեհեաններ շինել եւ իւր հերոսներին կանգնեցնելով նոյն մեհեանների մէջ՝ սկսեցին պաշտօն մատուցանել:

Քուրմերը որոց ձեռքին էր ժամանակի գիտութեան բանալին, աշխատեցան մինչեւ հաւատացրին ժողովրդեան, թէ այն աստուածներ՝ որոց պաշտօն են մատուցանում՝ նոքա, որք զաշխարհ ստեղծեցին, ոմն բարոյ եւ ոմն չարի՝ բուրմերի ձեռամբ յայտնում են ժողովրդեան՝ ապագայն, եւ ժողովուրդը բուրմերի երկբայական պատգամների մէջ զտնուած երբեմնական իսկութեան խաբուելով, որ պատահմամբ լինում էր, հաստատուեցաւ, ուստի իւր արիւնը նուիրել աստուածներին իրրեւ զո՞հ՝ չէր խնայում. իւր հայրենի ունեւորութեան եւ նուիրական տեղեաց համար նա քաղցր էր համարում մեռանել քան տեսնել նշանախեցն անգամ յեղափոխուած: Այս ամենը բարի նպատակի էին ծառայում, սակայն միջոցները նոյնքան բարի չէին. ուստի սնոտիսպաշտութեան ժամանակ, Նախախնամութիւնը իրրեւ դատարարակ աշխարհի պահեց Հրէից ազգը, որի քարոզած Մեսիայն պիտի ազնուացնէր ազգութեան մշտնջենաւորութեան նպատակի միջոցները: Երբ արդէն հեռանաւ ժողովրդից նոյնպիսի մարդիք յառնելու էին ինչպէս Ուրբատէն էր, եւ ժողովուրդը աչքը քաց անելով իմանալու էր թէ որոց իւր որդին է նուիրում՝ չեն աստուածներ. եկաւ ճշմարտութեան վարդապետը Հօր Աստուծոյ ծոցածին որդին, որ փոխանակ բուրմերի նման բազմաստուածութիւն եւ նոցա համար մարդադոմութիւն բարոզելու իւր ստեղծած արարածի յար-

զը ճանաչելով, զոչեց «Եի է Աստուած. Աստուած կենդանի եւ կենդանաբար, ստեղծիչ աշխարհի եւ նորա խնամածու Հայր. եւ դարձեալ, Ողորմութիւն եւ կամենում եւ ոչ զոհ»։ Այս երկու սկզբունքը Յիստոսի Քրիստոսի աշակերտներ արձագանգեցին ծանօթ աշխարհի չորս կողմը. բայց առանց գրաւականի հաւատ չէր բնծայում ժողովուրդը. ուստի, առաքելները Աստուծոյ Որդի ճշմարիտ Վարդապետից առած իրաւունք (Մատ. Ժ 1.) գործեցին պատահած ժամանակ հրաշք. այն ժողովուրդը որ խաբուած էր իւր հնարովի աստուածների հրաշագործութեամբ, իւր առաջին տեսնելով ճշմարիտ հրաշագործներ, համարում էին աստուած եւ կամենում էին պաշտօն եւ զոհ մատուցանել (Գործք. ԺԳ 8 — 15)։ Բայց Քրիստոսի առաքելներ չէին գնացած աշխարհ աստուածանալու համար, այլ բարոզել ճշմարիտ Աստուածը եւ մարդկութեան փրկութիւն. վասն զի Քրիստոսի աշխարհ զալը մարդկութիւնը իբրեւ մանուկ ինչ որ իւրեան զարմացրեց, աստուած անուանեց, եւ ստրկացաւ (իւրեան անյայտ նպատակով) աստուածների պաշտօնին. այս միջոցով մարդկութիւնը աշխատում էր ազգութեան կապը պահել։

Քրիստոսից յետոյ թէպէտ հաւատացեալները միացան կրօնի, սակայն ազգութեան զոյուժիւնը պահելու համար ազգային աւանդութիւնները չմոռացան, այլ հեծանոսականը քրիստոնէականի փոխելով յարգեցին ազգային աւանդութիւնները, եւ փոխանակ հերոսների յիշատակաւ ժողովրդեան զարթեցնելու դէպ ի ազգութիւն, նա քրիստոնէական նահատակների յիշատակը տօնելով նոյնը կամեցաւ անել, այն նահատակների՝ որոնք թէ ազգի եւ թէ կրօնի համար արիւն են թափել, որոց փառաւոր տեղը բռնում են ազգային քաջ նահատակները իւրեանց Վարդան սպարապետի հետ, եւ փոխանակ հին լեռների եւ անտառների՝ իւր հայրենեաց, եւ Աստուծոյ նուիրած եկեղեցեաց իբրեւ ազգութեան նուիրական նշխարների յիշատակը կամ նաւակաւորը տօնելով, խրախուսեց զժողովուրդ արիւն թափել նա եւ համակրօն ազգաց դէմ, որպիսի Յոյն եւ Հայերն էին, որոնք կամենալով իւրեանց ծէսերը եւ պահել ազգութիւնը, միմեանց վերայ էին յարձակում, թող օտարազգիքը։

Այն ժողովուրդները որք բարեբաղդ զոնկեցան եւ Քրիստոսի առաքելոց միջնորդութեամբ ճանաչեցին

իւրեանց փրկութիւնը, այս տեսակ ժողովրդոց սակում գտանուեցան եւ Հայերը իւրեանց ազնուամիտ թագաւորի միջնորդութեամբ։ Բայց այս նախնեմայ խայրիքով չկարողացաւ բաւականանալ Հայաստան։ Եւ թէ Ս. Գրիգոր Պարթեւ երկրորդ Ղուսաւորիչը չէր նորից նոյնը քարոզել, Հայերը Պարսիկների հետ մի օրէնք պաշտելու էին։ Ս Գրիգոր Պարթեւից յետոյ Հայերը ճանաչեցին իւրեանց հոգւոյ վերայ իշխող միայն Քրիստոնէութիւն, եւ իւրեանց ազգութեան անվանելի կոթող համարեցին կրօնը, կրօնը մանաւանդ անտերուհ ազգի համար՝ որը պիտի զրկուէր իւր քաղաքական պայմաններից, վասն զի Արշակունի թագաւորութիւնը վերջացել էր Պարսկաստանում եւ վերջնալոյսն էր Հայաստանի հօրիզոնի վերայ երեւում, եւ այս եւս Սասանեան հարստութիւնը իւր անընդհատ հարուածով կործանեց, եւ իւր իշխանութեան անուրը ծանրացրեց Հայերի վերայ։ Մոգական խորամանկութիւնը քաջ հասու լինելով, թէ քանի կրօնի խտրութիւն կայ տիրող ազգի եւ հպատակ ազգերի մէջ, անհնար է հպատակների ազգութեան տարրը միացնել իշխողի հետ, ուստի համոզեցին որ եթէ հպատակները միայն պարսկական կրօնին ծառայեն, այն ժամանակ զիւրին է զՀայս եւ Յունաց լայնածաւալ տէրութիւնը Պարսկաստանի հետ միացնել. թագաւորը ճշմարտութիւն զտեսնելով մոգերի խօսքի մէջ՝ իւր նպատակին հասնելու համար ամենայն միջոց գործ դրեց, հպատակ ազգերի կրօնը փոխել, աւանդութիւնները մոռացնել եւ նուիրական տեղեաց յիշատակը մոքներից հանելով՝ Պարսիկ ծուլել։ Հպատակ ազգերը՝ որոց հետ եւ Հայերը անտեղեակ լինելով պարսկական խորամանկութեան, թագաւորի հրամանին համեմատ իբրեւ զինուոր իւրեանց ներկայացուցիչ նախարարների հետ ներկայացան թագաւորին։ Երբ թագաւորը առաջարկեց նոցա ընդունել տէրութեան կրօնը, Հայ — նախարարները չկարողանալով դիմադրել իւրեանց ազգային իրաւանց պահպանութեան համար, առ երեսս թագաւորի հրամանը կատարեցին։

Բայց երբ նորա մոգերի բազմութեամբ կոխեցին հայրենի հողը, նոցա միտքը եկաւ ազգութիւն, եւ նորա իրաւունք պաշտպանել, պատկառելով հին հին ազգերից, որոնք ազգութեան տարրը պահելու համար ամենայն միջոց գործ էին դրել նոյն ինքն պարսիկներից՝ որոնք իւրեանց ազգութեան կապը ամուր պա-

հետոյ յետոյ աշխատում էին այլ որս ձեռք բերել, մանաւանդ որ ազգը կամենում էր քարկոծել իւր ազգութեան նախարարները, խրախուսուելով Աստուծոյ եկեղեցւոյ պաշտօնեայններից եւ քահանայներից, որոնք յիշեցնելով ազգութիւն, կրօնի սրբութիւն, պատրաստեցին անխարտելի նահատակներ : Հայ — նախարարները այս ամենը տեսնելով եւ զգալով խրախուսուած հոգեւորական դասից (որոց պարագլուխն Յովսէփ եւ Ղեւոնդն էին) մի քանի յաղթանակներ տարան Մամիկոնեան Վարդանի զօրավարութեան ներքոյ, սակայն ճշմարիտ քաջութիւնը է նպատակին հասնելու համար կամ մեռուցանել եւ կամ մեռնել, ուստի միամայն հաւանութեամբ որոշեցին վճռական պատերազմ տալ, կամ Հայ մեռնել եւ հայութիւնը անարատ պահել, եւ կամ պարսիկներին չթողուլ նպատակին հասնել : Այս իսկ որոշմամբ թէպէտ եւ մեռան նոքա պատերազմի դաշտի մէջ, սակայն այսպիսի մի վերնագիր թողին այն տեղ. «Եւնիս ի սէր ազգութեան եւ մեր կրօնի եւ աշանդութեանց եւ նուիրական հայրենեաց համար քաջութեամբ մեռանք, որոնք կամին ազգութեան եւ Ս. Կրօնի հարազատ որդի լինել, քնդ հետեւին մեր օրինակին» :

Այս վերնագիրը շատ անգամ հեղեղներ կամեցան ջնջել, սակայն քանի վերկացան՝ նոյնչափ հետքեր թողելով Հայաստանի այլ եւ այլ սահմաններում, ոչնչացան :

Այսպիսի վերնագրի մի տեսարան է Հայաստանի իւր քարուքանդ եւ աւերակ դիրքով, որը հետեւանք են նախնեաց ազնիւ զգացմանց. որոնք անձն ի մահ եւ մահ յանձն աշխատել են հայրենիքի հարազատ որդի լինել :

Եւ Վարդանանց տօնի օրը այն օրն է՝ որը սուրբ Հարանց զեղեցիկ նպատակին համեմատ եկեղեցին տօնելով Վարդանայ անկման յիշատակը, բաց է աւտում մեր առաջ երկու դուռն, արիւնոտ ճանապարհով ազնիւ մահ յանձն առնուլ եւ աշխարհի մէջ աւարքին անուամբ պարծիլ, եւ ընդարձակ պողոտայի դէպ ի պարսկական հնարագիտութեան կորուստ :

Բայց եթէ կամենում ենք բարի մարդ լինել, պիտի ծառայենք մի նպատակի, այն է ազգութիւն պահելու համար ամենայն միջոց գործ դնել, եւ առ է մարդկութեան բուն սահմանը, եւ ազնիւ վախճանը :

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱՅԻՔԻ ՄՈՎՍԻՍԵԱՆ.

ՀԵՐԻՔ Ի.

Հերիք է հերիք խաւարում մնանք,
Փախչենք խաւարից՝ դէպի լոյս գնանք.
Հերիք է այսպէս, սրտով լանք ողբանք,
Հայաստան Մօր ծոց մենք մտնել ջանանք :

Ահա ճանապարհ, ազնիւ ճանապարհ,
Որ պատրաստել է Աստուծո՞ւ բարերար,
Որի մէջ չկայ փշիւր դիմահար.
Ուրեմն շուտաքայլ լինինք հաւասար :

Թողնենք ծուլութիւն, դէպի սէր դիմենք,
Մեր անձ վիճ ուսման նոր զոհ պատրաստենք,
Կրօնին եւ լեզուին միաբան ուխտենք,
Անարատ մնալ, օրէցօր պատուենք :

ՕՐԻՈՐԴ ԵՂԻՍԱԲԵԹ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆՅ

Է ՆՐԷ ԿՂԵՄԻԱՆ

ՅԵՐԵԱՆ.

Ա. Զ. Գ. Ա. Ե. Ի. Ն.

ԿՏԱԿ Պ. ԲԷՐՈՒԶԵԱՆՅԻ

Վաւթայիսեցի հանգուցեալ Պօղոս Բէրուզեանց՝ տեղւոյն Հայոց Ս. Գէորգ Եկեղեցւոյ սրահում հիմնեալ հոգեւոր Գպրոցի յանուն՝ ի կենդանութեանն կտակած է երկայարկ քարուկիր մի կըրպակ, որպէս զի նորա արդեամբք Հ. զըպրոցին նիւթական միջոցին նպաստ եւ օգուտ լինի, եւ ըստ արժանւոյն ուշադրութիւն մատակարարուի ուսումնական վիճակին, եւ Հայկազուն մանկունք յաջողին քաջ ուսանել մեր լեզուն եւ կրօնը